



ԴԱՆՏԵ ԱԼԻԳԻԵՐԻ

(Մահվան 650-ամյակի առթիվ)

Սեպտեմբեր ամսին լրացավ «միջին դարերի վերջին բանաստեղծ և նոր ժամանակների առաջին բանաստեղծ» Դանտե Ալիգիերիի մահվան 650-ամյակը:

Դանտեն ծնվել է 1265 թվականին Ֆլորենցիայում:

13-րդ դարի երկրորդ կեսին Ֆլորենցիան ապրում էր քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքի եռուն շրջան: Գուելֆների և Գիբելլինների միջև ներքաղաքային պայքարները, գործարար շրջանների տրետեսական մրցակցությունները, վաճական մտավորականների աստվածաբանականփիլիսոփայական բանավեճերը, գաղափարական և գրական նոր հոսանքները—ահա այն մթնոլորտը, որի մեջ անցան Դանտեի պատանեկության և երիտասարդության տարիները Ֆլորենցիայում: Դանտեի երիտասարդության ժամանակ Գուելֆները վաղուց արդեն հաստատվել էին Ֆլորենցիայի համայնքի իշխանության գլուխ, հաղթականորեն ավարտելով իրենց պայքարը Գիբելլինների դեմ:

1295 թվականին 30 տարեկան հասակում Դանտեն մասնակցեց Ֆլորենցիայի քաղաքական կյանքին: 1300-ին ընտրվեց Ֆլորենցիայի պրիոր (Ֆլորենցիայի համայնքի կառավարության անդամ): Պրիորի պաշտոնը հետագայում Դանտեն համարեց «իր բոլոր դժբախտությունների պատճառը»:

Երկար չտևեց Դանտեի պաշտոնավարությունը Ֆլորենցիայի կառավարության կազ-

մում: 13-րդ դարի վերջերին Ֆլորենցիան կառավարող Գուելֆները իրենց հերթին բաժանվել էին երկու հակամարտ հատվածների՝ «Սևերի» և «Սպիտակների»: Դանտեն պատկանում էր «Սպիտակների» հատվածին:

1302 թվականին, երբ «Սևերը» պապական ուժերի օգնությամբ Ֆլորենցիայի կառավարության գլուխ անցան, «Սպիտակներին» արքայազնի իրենց բնավայրից: Դանտեն նույնպես վտարվեց իր հայրենի քաղաքից և «Սևերի» իշխանության կողմից հեռակա դատապարտվեց մահվան:

Դանտեն այլևս չվերադարձավ Ֆլորենցիա: Աքսորի տարիներին հեռացավ մահ «Սպիտակներից» և իր սեփական խոսքերով «կուսակցություն կազմեց ինքն իրեն»: Այնուհետև թափառական կյանք վարեց Իտալիայի տարբեր քաղաքներում: Բոկաչչոյի վկայությամբ եղել է նաև Փարիզում: Աքսորականի վերջին հանգրվանը եղավ Ռավեննան, որն ապրեց իր կյանքի վերջին տարիները և աչքերը հավետ փակեց 1321 թվականին:

Եվ այսպես Դանտեն իր կյանքը ավարտեց անքնորոն, չկարողանալով վերադառնալ իր «հայրենի փարախը, ուր քնել էր որպես գառ» և որտեղ հույս ուներ ստանալ «բանաստեղծի դափնին»: Աքսորը Դանտեին բերեց միայն փուշ ու տառասկ, որոնք նրան զգալ տվին, թե «Ինչքա՛ն դառն է հացն օտարի և ինչքա՛ն դժվար է ելնել իջնել օ-

տարների սանդուղքով»։ Բայց աքսորը Դանտեին դարձրեց մտածող և նրա բանաստեղծի զգայնությունը օժտեց իմաստասերի կրճատությունը։ Առանց իր քաղաքական տարագրության Ֆլորենցիայից, Դանտեն չէր դառնա «Մեծ Ֆլորենտացի», շրջապատող իրականության մասին հետզհետե լայնացող հայացքներով, որոնք ամբողջական և գեղարվեստական արտահայտություն ստացան իր «Աստվածային կատակերգության» մեջ։

«Աստվածային կատակերգության Դանտեն միշտ ի մտի ունի Ֆլորենցիան, համառորեն, սրտի դառնությամբ, աքսորյալի սիրո գայլությունով,—գրել է իտալացի ժամանակակից հետազոտող Ատտիլյո Մոմիլյանոն իր մի աշխատության մեջ,—...Աքսորը նրան զրկեց մի հայրենիքից, բայց նրան չուրեց մի ուրիշը. Աստվածային կատակերգության մեջ զգացվում է, որ նրա հայրենիքը աշխարհն է, մի հայրենիք, որ չափազանց լայնարձակ է սիրո ափովելու համար... Աքսորը նրան զգացրեց անջրպետը իր և ուրիշ Ֆլորենտացիների միջև և ընդհանրապես իր և ժամանակակիցների միջև. առանց այդ անջրպետի Դանտեն չէր կարող դառնալ մերձավորի դատավոր։ Աքսորը կյանքի նրա իղեալը ուղղեց դեպի անցյալը և դեպի ապագան, նպաստեց Աստվածային կատակերգությունը դարձնելու ներկայի դատապարտություն, հիմնավորեց Ֆլորենցիայի գովք, մեծ հույս ազատարարի վրա։ Ուստի չափազանցություն չի լինի գուցե ասել, որ աքսորը հզորապես նպաստեց նրան դարձնելու մարդկության դատավոր, անցյալի գովերգիչ և ապագայի մարգարե... Աստվածային կատակերգությունը,—այնուհետև գրել է Մոմիլյանոն,—բարոյական դատաստան է և միաժամանակ քաղաքական դատաստան... Զգացվում է, որ Աստվածային կատակերգության մեջ Դանտեն մարդկության դատավորն է, բայց հատկապես նրա որոշ ժամանակաշրջանում, այսինքն քաղաքական մի ժամանակաշրջանում. և Դանտեն քաղաքական մի ժամանակաշրջանի դատավորն է, որովհետև Դանտեն «անարժան աքսորական» է, և աքսորը ուղղություն ու ձև տվեց նրա ամբողջ քաղաքական հայացքներին և նրա բարոյական հայացքների նշանակալից մասին... Առանց աքսորի Աստվածային կատակերգությունը հղացված կլիներ տարբերապես. շատ անձնավորություններ մաս չէին կազմի այնտեղ և գուցե շատ նվազ կլիներ պոեմը կենդանացնող պատմական դեմքերի արտատվող թափը... Աստվածային կատակերգությունը Դանտեի

ժամանակակից կյանքն է, նրա բարոյական և քաղաքական կյանքը, ներկայացված բազմաթիվ անձնավորություններով և փոխադրված հանդերձալ աշխարհում»։

Դանտեի ստեղծագործություններն են «Նոր կյանք»-ը և բանաստեղծությունների մի շարք, «Խնջույք», «Ժողովրդական պերճախոսություն»¹, «Միապետություն» քննախոսությունները և «Աստվածային կատակերգություն» պոեմը։ Դանտեն ունի նաև բովանդակալից նամակների մի շարք։ Բացի սրանցից, Դանտեն է վերագրվում լատիներեն մի քննախոսություն ջրի և հողի մասին։

Ահա սրանք են մեծ Ֆլորենտացի բանաստեղծի ու մտածողի երկերը, որ նա հորինել է իր ստեղծագործական կյանքի երեք տասնամյակներում։

«Նոր կյանքը» և բանաստեղծությունների մյուս շարքը Դանտեն գրել է երիտասարդության տարիներին Ֆլորենցիայում, իսկ մյուս երկերը գրել է աքսորի տարիներին։

«Նոր կյանքը» Դանտեի ինտիմ կյանքի պատմությունն է, պատմությունը իր սիրո՝ հանդեպ Բեատրիչեի, և գրված է Բեատրիչեի մահից հետո, 1292—1293 թվականներին։

«Նոր կյանքը» քաղկացած է 30 բանաստեղծություններից (25 սոնետներ, չորս կանցոնիներ և մեկ ստանցա) և միջանկյալ արձակ պատումներից։

«Նոր կյանքը» և Դանտեի սկզբնական շրջանի մյուս բանաստեղծություններն արդեն կրում էին դրոշմը «Նոր քաղցր ոճի» (Dolce stil nuovo)—ֆլորենտական գրական մոր դպրոցի, որի հիմնադիրն էր բանաստեղծ Գուիդո Գուինիցելլին (մեռ. 1273-ին), իսկ հետևորդներն էին Դանտե Ալիգիերին, Գուիդո Կավալկանտին և ուրիշներ։

Զիվելեգովը և աուուհետև սովետական ուրիշ դանտագետներ «Նոր կյանքը» որակել են «արևմտա-եվրոպական գրականության մեջ առաջին ինքնակենսագրական պատմությունը գրված իտալերեն լեզվով»։ Իսկ սովետական ժամանակակից դանտագետ Գոլենիշև-Կուստովը «Նոր կյանքը» համարել է «առաջին հոգեբանական ողբերգական եվրոպական գրականության մեջ»։

¹ Դանտեի այս գործը «Աստվածային կատակերգության» 1969 թ. հայերեն հրատարակության ծանոթագրությունների մեջ մեկը վերնագրել էինք «Իմաստուն բարբառ», ըստ հին ընթերցման՝ «De vulgari eloquio». Որ ընթերցմամբ վերնագրվում է «De vulgari eloquentia». — «Ժողովրդական պերճախոսություն»։

«Նոր կյանք»-ի վերջում Դանտեն խոստանում է հետաքրքիչ մասին «ասել այն, ինչ երբեք չի ստվել ուրիշ որևէ կնոջ մասին»:

Դանտեն իր խոստումը հետագայում կատարում է գլուխգործոց պոեմի մեջ, իր սիրուհուն դասելով դրախտաբնակ սրբերի ու հրեշտակների շարքը, միաժամանակ նրան դարձնելով քրիստոնեական հավատի խորհրդանշիչ:

Այստեղի առաջին տարիներին (1303—1307) Դանտեն գրել է «Խնջույք» և «Ժողովրդական պերճախոսություն» անավարտ քննախոսությունները:

Ըստ Դանտեի ծրագրի, «Խնջույքը» պետք է լիներ ընդարձակ մի աշխատություն բաղկացած 14 գլուխներից և պետք է դառնար իր ժամանակների գիտելիքների մատչելի մի համագիտարան:

Աշխատության 14 գլուխներից Դանտեն գրել է չորսը, ուր շոշափում է իր ժամանակի փիլիսոփայության, բարոյականության, բնագիտության և տիեզերաբանության հարցերը հիմնված հնադարյան և միջնադարյան իմաստունների հեղինակության վրա:

«Խնջույքը» Դանտեն գրել է նույնպես իտալերեն լեզվով, որպեսզի հոգեկան խընջույքին, այսինքն գիտության բարիքներին մասնակից դարձնի ժողովրդական լայն խավերին, որոնց համար լատիներենը արդեն կենդանի լեզու չէր:

«Խնջույքը» իտալերեն գիտական արձակի առաջին էջերն էին Գալիլեյից երեք դար առաջ:

«Խնջույքի» առաջին գլուխը ավարտվում է ժողովրդական լեզվի (իտալերենի) մասին հետևյալ մարգարեական խոսքերով.

«Դա կլինի գարու հաց, որով կկշտանան հազարավորներ... Դա կլինի նոր լույս, նոր արև, որը կբարձրանա այնտեղ, ուր հին արեվը մայր կմտնի, և կլուսավորի նրանց, ովքեր մթության մեջ են, քանի որ հին արևը այլևս լույս չի տալիս նրանց»:

Դանտեն իտալերեն լեզուն որակում է «գարու հաց», իսկ լատիներենը «ցորենի հաց». գարու հացով կշտանում են հազարավորներ, իսկ ցորենի հացը մատչելի է քչերին:

«Ժողովրդական պերճախոսություն» գրքով, որը նույնպես անավարտ է և գրված է լատիներեն լեզվով, Դանտեն նվիրել է հենց իտալական ժողովրդական լեզվի և բանաստեղծական արվեստի քննությանը:

«Ժողովրդական պերճախոսություն» քննախոսությունը «Նոր եվրոպայի պատմության» մեջ առաջին գրվածքն էր բանասիրա-

կան թեմայով, և նրա հեղինակը մեծ բանաստեղծ էր, որը ապրել է երկու դարաշրջանների՝ Միջնադարի և Վերածնունդի սահմանագլխին, ասել է բանասեր և մեր հայրենակից Ռուբեն Բուդագովը վերջին տարիներս հրատարակած ուսերեն մի աշխատության մեջ:

Դանտեն կիսատ թողնելով «Խնջույքը» և «Ժողովրդական պերճախոսությունը», գրում է «Միապետություն» քաղաքական քննախոսությունը (լատիներեն) և հուշակալոր «Աստվածային կատակերգություն» պոեմը (իտալերեն):

«Միապետություն» գրքով, որ Դանտեն գրել է 1312 կամ 1313 թվականին, շոշափում է երկու հիմնական գաղափար—մեկը վերաբերում է աշխարհը կառավարելու վարչաձևին, իսկ մյուսը՝ կայսրության ու եկեղեցու փոխհարաբերությանը:

Այս երկու գաղափարները Դանտեի մեջ առաջացան պատմության դառն փորձից և իր դարաշրջանի պայմաններից:

Ազգամիջյան պատերազմները, ավատական և քաղաքային իշխանությունների միջև պայքարները, ներքաղաքային հատվածական կոիվները, կայսրության և եկեղեցու միջև բանավեճերը առիթ տվեցին Դանտեին խորհրդածելու հասարակական օրգանիզմի վերակազմության մասին: Այդ խորհրդածության արդյունքն է մարդկության միավորման գաղափարը, հիմնված բանական սկզբունքների վրա: Այդ գաղափարը, ըստ Դանտեի, կարող է իրականացնել համաշխարհային միասնական պետությունը (ի դեպ, քննախոսության Monarchia վերնագիրը, որ բառացի թարգմանվում է «Միապետություն», Դանտեն նախ և առաջ հասկանում է ոչ թե մեկի պետություն, այլ միասնական համաշխարհային պետություն, որը ներկայացնում է ամբողջ «մարդկության» շահերը):

Ըստ Դանտեի քննախոսության, միասնական պետության մեջ պետք է խստորեն սահմանափակվեն եկեղեցու իրավասությունները: Եկեղեցին պետք է զբաղվի միայն հոգևոր իշխանությամբ, իսկ աշխարհիկ կամ քաղաքական իշխանությունը պետք է վերապահվի միասնական պետության օրգաններին: Եկեղեցին հեռու լինելով քաղաքական իշխանության հավակնություններից, պետությունը հնարավորություն կունենա ապահովելու «ամբողջ աշխարհի բարօրությունը», «ընդհանուր խաղաղությունը» և «արդարությունը», ինչպես գրել է Դանտեն քննախոսության առաջին գլխում:

Այս է Դանտեի «Միապետության» քաղաքական ծրագիրը:

Տարօրինակ է եղել Դանտեի «Միապե-

տության» ճակատագիրը: 14-րդ դարում, Դանտեի մահից հետո, եկեղեցու հայրերն այդ երկի մեջ տեսան վտանգավոր հերետիկոսություն: Կարդինալ Բելտրանդո դել Պոջետտոն, ըստ Բոկաչչոյի վկայության, հրամայել է այդ երկի ձեռագիրը և Դանտեի ոսկորները, իսկ դոմինիկյան վանական Գուիդո Վերնանդին մի սուր պամֆլետ է գրել Դանտեի «Միապետության» դեմ: 16-րդ դարում լուսերակայները Դանտեի «Միապետությունը» ծառայեցրին իբրև գաղափարական զենք կաթոլիկ եկեղեցու դեմ մղած իրենց պայքարում: Մեր ժամանակներում արեվմոստքի որոշ դանտեագետներ Դանտեի քննախոսության քաղաքական ծրագիրը որակեցին «կոմունիստական ուտոպիզմ»: Դանտեի «Միապետությունը» թերագնահատվել է նաև մեզ մոտ անցյալում, այդ երկի մեջ տեսնելով ոչ թե մարդկության ապագա կառավարման ծրագիր, այլ վերադարձ դեպի հոռմեական կայսրություն:

Ժամանակակից սովետական դանտագիտությունը ճիշտ մեկնաբանելով Դանտեի միտքը և «Միապետության» իմաստը, պատշաճորեն գնահատեց այդ երկը, որակելով այն «քաղաքական մեծ քննախոսություն» (Բալաշով):

Մեզ մոտ անցյալում որոշ չափով թերագնահատվել է նաև Դանտեի «Խնջույքը», այդ երկի մեծ մասի մեջ տեսնելով միջնադարյան գաղափարների շարադրանք:

Ներկայումս սովետական դանտագիտությունը ճշտորեն կշռադատում և ըստ արժանվույն գնահատում է Դանտեի թե՛ «Խնջույքը» և թե՛ «Միապետությունը», որոնք առաջին անգամ լույս տեսան վերջին տարիներս ռուսերեն թարգմանությամբ և մեկնաբանությամբ:

Ժամանակակից դանտագիտությունը այդ երկու երկերը կարևոր է համարում ոչ միայն ճիշտ հասկանալու համար Դանտեի մտածողության և շահագրգռությունների այլազան կողմերը, այլև տեսնելու այդ երկերի կապը Դանտեի գրական մեծ կոթողի՝ «Աստվածային կատակերգության» հետ, որի կերտման համար նախապատրաստական աշխատանքներ հանդիսացան հեղինակի նախընթաց երկերը, ինչպես նշել են իտալական և սովետական հետազոտողները:

«Աստվածային կատակերգություն» պոեմը Դանտեի ամենաձավալուն գործն է և գրչության գործողը: Մեծ բանաստեղծը այդ ստեղծագործությունը հորինել է իր կյանքի վերջին երկու տասնամյակում և հղացել է իբրև տեսիլք կամ տեսլական ճանապարհորդություն հանդերձյալ աշխարհում:

Ճանապարհորդությունը կատարում է ին-

քը Դանտեն հնադարյան նշանավոր լատին բանաստեղծ Վիրգիլիոսի և իր պատանեկան կյանքի սիրուհի, վաղամեռիկ հետադիմ առաջնորդությունը: Դանտեն առաջնորդվում է հանդերձյալ աշխարհի երեք թագավորությունները—Դոխք, Քավարան, Դրախտ: Դոխքում երևում են մեղավորները, Քավարանում՝ ապաշխարողները, իսկ Դրախտում՝ արդարները: Այն բոլոր անձինք, որոնց Դանտեն տեսնում է և շատերի հետ գրոցում ամենաբազմազան հարցերի շուրջ—սկսած անձնականից մինչև հասարակական կյանքի հարցերը—երկրում ապրած և մահացած մարդիկ են: Դանտեի պոեմում գործողության վայրը հանդերձյալ աշխարհն է, բայց գործող անձինք իրական մարդիկ են, ինչպես ինքը Դանտեն, իրական կամ երկրային շահագրգռություններով:

Տեսիլքի այս ընդհանուր ֆոնի վրա է կառուցված Դանտեի պոեմը:

Դանտեի «Աստվածային կատակերգությունը» ամենից առաջ աչքի է ընկնում իր ճարտարապետական համաչափ կառուցվածքով:

Պոեմը բաժանված է երեք գրեթե հավասար մասերի («Դոխք», «Քավարան», «Դրախտ»): Յուրաքանչյուր մասը բաղկացած է 33 երգից, չհաշված «Դոխք»-ի առաջին երգը, որը ներածություն է ծառայում ամբողջ պոեմի համար: Այսպիսով ամբողջ պոեմը կազմում է 100 երգ: Երգերի հյուսվածքի տաղաչափության ձևը շղթայակապ հանգեցրով եռատողն է (տերցինը): «Կատակերգության» յուրաքանչյուր մաս ունի ինը բաժանումներ (3×3)—ինը պարունակներ «Դոխք»-ում, երկու գոտիներ և յոթ բոլորակներ «Քավարան»-ում, ինը երկինքներ «Դրախտ»-ում:

Ինչպես տեսնում ենք, Դանտեի պոեմի կառուցվածքի համաչափության հիմքը երեք թիվն է, որը չունի անշուշտ գուտ կրոնական իմաստ, այնպես ինչպես իտալացի հետազոտող Մարիո Յուրինին կրոնական իմաստի չի վերագրում «Կատակերգության» տաղաչափության հիմքը կազմող եռատողը: «Եռատողը,—ասել է նույն հետազոտողը,—սիմբոլն է Դանտեի բանաստեղծական զգայունության և միջնադարյան մշակույթի, ինչպես Արիոստոյի ութնակյը դառնալու է սիմբոլը վերածնունդի մշակույթի»:

«Աստվածային կատակերգության» երկրորդ գլխավոր առանձնահատկությունը բովանդակության բազմազանությունն է, գաղափարական լայն աշխարհը, ուր ընդգրկված և համարված են Դանտեի փիլիսոփայական, իրավական, հասարակական, քաղաքական, կրոնական, բարոյագիտական

և գեղագիտական հայացքները, դանտեական կրթոտ դատապարտությունները աշխարհիկ և հոգևոր իշխանավորների դեմ, հնադարյան և միջնադարյան մշակութային տարրերը, դիցաբանական և քիքլիական ավանդությունները, պատմական դեմքերն ու դեպքերը:

«Աստվածային կատակերգության» երրորդ գլխավոր առանձնահատկությունն է լեզվաճանաչական ձևերի ճոխությունն ու ճկունությունը և բանաստեղծական պատկերների՝ հատկապես փոխաբերությունների ու համեմատությունների առատությունն ու պլաստիկությունը:

«Աստվածային կատակերգության» ճարտարապետական կառուցվածքի համաչափությունը, բովանդակության ճշտորեն տեղաբաշխումը պոեմի մասերի և ենթամասերի մեջ և բովանդակությանը համապատասխան արտահայտչական ձևերի ու բանաստեղծական պատկերների ընտրությունը Դանտեի գլուխ-գործոցի այն հիմնական հատկանիշներն են, որոնք արժեվորել են ոչ սոսկ դանտեագիտության մասնագետները:

Դեռ Պուշկինը Դանտեի պոեմի միայն պլանը որակել է «բարձր հանճարի պտուղ», իսկ Դանտեին անվանել է «il gran padre Alighieri» (Մեծ հայր Ալիգիերի):

Ի տարբերություն անցյալ դանտեագիտության, որը Դանտեի «Աստվածային կատակերգության» մեջ տեսնում էր երկվություններ և հակասություններ, ժամանակակից

դանտեագիտությունը Դանտեի պոեմի մեջ տեսնում է ներդաշնակ միասնություն, միասնություն ինչպես պոեմի արխիտեկտոնիկայի մեջ, այնպես էլ պոեմի բովանդակության մեջ: Ժամանակակից դանտեագիտությունը «Աստվածային կատակերգության» բովանդակության այլազան տարրերի մեջ տեսնում է այլազան շողեր, որոնք ճառագայթում են այլազան ուղղություններով, բայց բխում են մեկ ընդհանուր ակունքից՝ մեծ բանաստեղծի բազմախորհուրդ ոգուց:

Այս միտքը հաստատենք և հողվածը եզրափակենք ՍՄՀՄ ԳԱ Դանտեական հանձնաժողովի նախագահ Իգոր Բելզայի խոսքերով:

«Հավակնություն չունենալով որևէ սեռ-սացիոն հայտարարության,—ասել է ակադեմիկոս դանտեագետը 1965 թվականին, Դանտեի հոբելյանական տարում,—կարելի է բացարձակ վստահությամբ ասել, որ Դանտեն արածնի է ուսումնասիրության ոչ միայն իբրև Արևմուտքի մեծագույն բանաստեղծ, այլև կատարելապես ապշեցուցիչ, գրեթե բացառիկ երևույթ իսկական հանրագիտական օժտվածությամբ: Անկասկած, կարող են լրիվ չափով Դանտեին վերաբերվել Պուշկինի մասին ասված Միցկևիչի խոսքերը. «Ոչ մի երկրին տրված չէ, որ այնտեղ կարողանա մեկից ավելի անգամ երևան գալ մի մարդ, որը իր մեջ զուգակցի այնքան ակնբախ և այնքան բազմապիսի կարողություններ, որոնք, ասես, պետք է բացառեին միմյանց»:

Ա. ՏՍՅԱՆ

